





ՇԱՐԱԲԱԹԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ  
Կը հրատարակուի մէջն Շարաթ օրեր,  
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, . . . . . ԳԱՆՁԱՊԵՏ.  
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՅԵՍԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ  
ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ

ՏԼ. ՍԹ. Տարեկան 10 ֆրանք.  
Վեցամսեայ 50  
Եռամսեայ 40

Մտար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝  
To the DICKENS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱՐԱԹ, ՕԳՈՍՏՈՍ 6 1898.

ՎԵՐԱԴԱՐՁԷ՛Ք ՁԵՐ ՀՕՏԻՆ

Հովիւ քաջ զանձն իւր դնէ  
ի վերայ ոչխարաց իւրոց:

Ո՛ւր է հովիւը, ո՛ւր է հօտը. . . . . Հովիւները 40 օր-  
ուան ճամբայ հեռի փախած են իրենց հօտերէն:

Հայ մարդու հօտերուն վրայ կատաղի գայլեր յարձա-  
կեցան. ոչխարներու և գառնուկներու մէկ մասը պատառ  
պատառ ըրին. իսկ հօտի մեծ մասը գիւմարեց քաղան-  
ներու վոճակին, և ընդհանրապէս չի հեռացաւ իր նուիր-  
ական բնակավայրէն՝ Հայաստանէն: Իսկ հովիւները . . .  
ո՛հ, անոնք գայլերու երևումէն առաջ և վերջը քանցեցին  
իրենց հօտերն ու փախան հազարաւոր մղոններ հեռու,  
չա՛տ հեռու. հօտերէն այլ, Հայրենիքէն ալ հեռու, որ-  
պէս զի իրենք . . . ազատին: Այո՛, ո՛վ յարգելի բողոքա-  
կան պատուելիներ և հովիւներ, դուք այսպէս ըրիք: Լու-  
սաւորչական Տէր պապան ու Բողոքական Պատուելի մի-  
և նոյն է ինձ համար. ո՛չ առաջինը պաշտելու նախապա-  
շարու մն ունիմ և ո՛չ վերջինը ատելու մասնաւոր պատ-  
ճառ մը, հետեւաբար ինչ որ ըսի և ինչ որ պիտի ըսեմ հի-  
մայ՝ պարզ ճշմարտութիւններ են. և ճշմարտութեան հա-  
մար միևնոյն բանն է վեղարն ու սիրիւտը, սուրչառն ու  
սէթրէն:

Ահա ինչ կոտորածներէն վերջ 2 1/2 միլիոն Հայ ժողո-  
վուրդէն միայն 50-60 հազար հոգի, այն ալ յուսահատու-  
թեան ազդեցութեան տակ, վնասակար ու սխալ հաշուով  
մը ձգեց իր հայրենիքը ու ելաւ պանդխտութեան. մինչ-  
դեռ Հայաստանի 150 պատուելիներու 75ը կամ աւելին և  
բրոֆէսորներու 10էն 7-8ը թողուցին իրենց ամպիոններն  
ու դասարանները, հօտերն ու աշակերտները և փախան,  
ճիշդ դասալիքի մը նման՝ մինչև Ամերիկայ և ուրիշ տե-  
ղեր: Եթէ ուշադրութիւն ընէք, նիւ Եօրք և նիւ ինչ-  
ընտ նահանգներու մէջ միայն 50է աւելի Հայ պատուելի-  
ներ պիտի գտնէք, 5-6 Հատ ալ բրոֆէսորներ, որք՝ երեւ-  
մըն 10-20 և շատ շատ 50-60 հոգիէ բաղկացեալ ժողո-  
վուրդ մը խմբած իրենց շուրջն, ու անոնց շնորհիւ Ամե-  
րիկեան Պօրտ ընկերութեանէն ապրուստի միջոց մը սպա-  
հովցուցած՝ մոռցած են ուրիշ ամեն բան: Իսկ այն պատ-  
ուելիներ որ չէ յաղողած տակաւին հօտիկ մը ձեռք բերել  
ու շարժական մը ապահովցնել, իր միակ գործն է միշտ  
երթալ Պօրտի գործակատար Հիքքօք անուն մարդակերպ  
հրէշին քով ու ամեն անվայել ու ստոր կերպով քծնիլ ա-  
նոր, և այս կամ այն Հայ պատուելի զրպարտել՝ զայն  
միսիօնարի աչքէն հանելու և անոր տեղը կրնալ առնելու  
համար: Վերջերս Նարբերդէն եկող նամակի մը մէջ ըս-  
ուած էր թէ՛ ջրմակայ գիւղերու ազգային վարժարաննե-  
րու դասերը մնացած են ապիկար և անկարող ընթացա-  
ւարտներու ձեռքը, ամպիոններն ալ՝ թափուր և կամ նոյն  
դասատուներու թափթփուկ անճոռնի քարոզիչներուն. իսկ  
Եփրատ քօլէճի Հայ ուսանողներն, ըսած էր նամակը, զըր-  
կուած են իրենց դասատուներէն ու բրոֆէսորներէն, և  
Հայրենի ստրկեցողներ չուսին: Նոյն քօլէճի փրօֆէսոր-  
ներէն 2-3ը Հոս են. փրօֆէսորութիւնն ձգած քարոզչու-  
թեամբ կ'ըլդաղին:

Ըսէ՛ք, կը խնդրեմ, անկեղծութեամբ ըսէ՛ք, անկեղծ,  
անճեղքաց ու ճշմարիտ հովիւ մը այսպէս պիտի ընէ՞ր.  
մանաւանդ այս օրերուն մէջ՝ երբ Հայաստանի ժողովուր-  
դը ուրիշ ո՛ր և է ժամանակէ աւելի պէտք ունի իր հօ-  
վիւներուն: Եւ քաջ հովիւը կը ըսանէ՛ զայն ու կը փախ-  
չի՛ այսպէս:

Թերևս մեզ պատասխանեն Աւետարանի խօսքով թէ՛.  
«Մենք իննըսուն և ինն թողով՝ եկանք մէկ ոչխարը զըտ-  
նելու, որպէս զի երբ զայն գտնենք, երկնքի մէջ խնդրե-  
ներ սարգուին. . .»: Լա՛ւ. սակայն մեր Հովուապետը ըսել

չուզեց երբէք թէ երբ մէկ ոչխարը կը գտնէք՝ դուք ալ  
անոր քով տեղաւորուեցէք ու նստեցէք, այլ իւր հրա-  
մանն էր զայն առնել ու հօտին վերադարձնել: Օրհնեալ-  
ներ, դուք Հոս եկաք ու ոչխար մը գտնելուդ պէս, ա-  
ռիք, նստեցաք ու սկսեցիք անոր շնորհիւ ապրիլ՝ մոռա-  
նալով 99 հատը:

Մի բարկանաք պատուելիներ, եթէ ըսեմ անկեղծու-  
թեամբ թէ՛ տգէտ, կոչառ ու կոպիտ տէր Հայրերը ձեզ մէ-  
տեղի հօտատիրութիւն ցոյց տուին անկեղ վտանգին ժա-  
մանակ: Ո՞րքն ու Աւետարանը ձեռքը, օրհնեցող բերանը՝  
չատ տէրաէրներ կոտորուեցան ժողովուրդին հետ: Ասոնք  
եթէ իրենց կենդանութեան ատեն՝ ազգասիրութեան օրի-  
նակ չէին եղած իրենց ժողովուրդին, գէթ կրօնքի նահատա-  
կը եղան:

Երկու շատ մեծ ու շատ նուիրական պարտքեր կը ծան-  
րանային ձեր վրայ. Հայրենասիրութեան և կրօնքի պարտ-  
քը: Դուք իբր Հայրենասէրներ, Հայրենիքի և ազգի լինե-  
լու և չի լինելու րոպէներուն, ժողովուրդին միակ ու ան-  
պաշտպան ձգելով հուրին և թուրին դէմ՝ փախչելու չէիք.  
Իսկ իբր Բրիտանոս աշակերտ՝ հոն մնալու էիք, զի ձեր  
գործը նոր կ'սկսէր հոն, ժողովուրդը ամեն ժամանակէ  
աւելի պէտք ունէր միսթարանքի ու կրօնքի զօրաւիզին:  
Իսկ դուք ո՛չ Հայրենասէր եղաք և ո՛չ ալ կրօնասէր-  
ներ, այլ . . . երկշատ հովիւներ:

Ամպիոնէն հիմայ աւելի ազատ կարելի է խօսիլ ժո-  
ղովուրդին, քան Լուսաւորչականի խորանէն:  
Ձեր ժողովուրդը ձեզ կը կանչէ.  
Վերադարձէ՛ք ձեր հօտին. . . .

ՍԱՐԴՈՒԹ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Անակնկալ լուր մը տուած չի պիտի ըլլանք անշուշտ  
երբ ըսենք թէ քաղաքիս Բարեգործական Ընկերութիւնն  
քայքայեալ վիճակի մը մատնուած է նորէն: Մեր ստացած  
վստահելի լուրերուն նայելով՝ ընկերութեան գանձը պար-  
պուած է բոլորովին. դրամ չի կայ ընաւ ծախսելու հա-  
մար, և որ աւելի գէշն է՝ յոյս ալ չի կայ անկէ վերջ ա-  
պառկիներ գանձելու: Իրաց այս վիճակին մէջ աւելորդ  
է թերևս ըսել թէ Գործադիր ժողովոյ ձեռքերն կապուած  
կալիպանդուած են. և որովհետև Բարեգործական Ընկերու-  
թիւն ըսուած մարմինն Գործադիր ժողովոյ մէջ կը կա-  
յանայ, հետեւաբար այդ մարմնի կալիպանդուած ըլլալը ըն-  
կերութեան քայքայումը կը նշանակէ:

Շատ անգամ ըսուած ու ընդունուած ճշմարտութիւն  
մէ՛ք թէ տեղական պահանջներն բարեգործական Հաստա-  
տութեան մը պէտքը շատ զգալի կ'ընեն ամեն օր, և թէ  
նիւ Եօրքի գաղթականութիւնն մեծ պէտք ունի այսպիսի  
մի օգտաշատ ընկերութեան: Բայց՝ հակառակ այս անկեղծ  
համոզման ու ճշմարտութեան՝ Բարեգործական Ըն-  
կերութիւնն հոգեւոր վիճակի մը ենթարկուած է այսօր՝  
թափուր գանձով մը:

Եւ այժմ խնդրի է թէ ի՞նչ ընելու է այս ընկերութիւնն  
հաստատուն հիման մը վրայ դնելու համար: Այս Հարցման  
ուղղակի պատասխանել հարկ չենք սեպեր հոս, այլ պիտի  
խնդրենք ընթերցողէն անոր յարմար պատասխանն ու լու-  
ծումը փնտռել այս յօդուածի «տողերուն մէջտեղ»:

Մեզմէ խնդրուած է սակայն դիմում ընել ժողովուրդի  
ազգասիրական զգացմանը ու . . . քսակին և օգնութիւն  
խնդրել՝ ընկերութեան գործը իւրացնելու և մեքենային  
առանցքներն առատ իւզով օծելու համար: Մեր կարծ-  
եօք՝ խնդիրն լոկ դրամի խոդիր չէ, այլ անկէ անդին բան  
մը կայ որ խոչընդոտ եղած է այս գործի յառաջդիմու-  
թեան: Եթէ ժողովուրդն այսօր 800 տոլար ևս զնէ Բարե-  
գործական Ընկերութեան տրամադրութեան տակ, այս  
վերջինս պիտի ոգևորի անշուշտ, ու շարունակէ իր գործ.  
— Դրամ ու ոլորմութիւն բաժնել կարօտելոց, գրասենեակ  
մը բաց՝ և գործակալ մը վճարուած պահել. սակայն այս  
բաւակա՞ն է. և խօսքը մէջերնիս, այս մի՞այն պիտի ըլլար  
ընկերութեան նպատակն ու պարտականութիւնն. . . .

Բ. Ընթերցողք կը յիշեն անշուշտ թէ անցեալ Փետրվար  
ճի կիրակի օրն՝ Բարեգործական Ընկերութեան հրաւիրա-  
նօք՝ վարդապետ, տէրտէր, պատուելի, քարոզիչ մեծ ու  
պզտիկ ժողովուած էին 23րդ փողոցի եկեղեցւոյն մէջ՝ դը-  
րամ հաւաքելու համար յիշեալ ընկերութեան անունով:  
Որուն բաղմունքի մը ներկայ էր այդ օր: Ս. Պատարա-  
գէն վերջ հանգանակութիւնն սկսեց վարպետ կարգադրու-  
թեամբ. բայց 50է աւելի անձինք չի մասնակցեցան անոր,  
որոյ արդիւնքը, 800 տոլարի չափ, ընկերութեան սակաւաշու-  
նից տրամադրութեան տակ դրուեցաւ, որպէսզի սա վերջինք  
«բան մ'ընեն» անով, և բան մ'ըրին . . . շնորհակալ ենք:

Մենք այն ատեն, իբր թարգման ժողովուրդի ձայնին,  
դիտել տուինք թէ պատճառ մը կար անշուշտ որ արդի-  
ւնց ընդհանուր ժողովուրդն մասնակցեցէ այս բարեգոր-  
ծական ձեռնարկին, և թեւադրեցինք ընդհանուր ժողով  
մը կազմել՝ այդ դեռարուութիւնն վերցնելու ու Հասարա-  
կութեան հետ հասկացողութեան մը գալու համար: Ժո-  
ղովուրդը զո՛հ չէր Գործադիր ժողովէն՝ հաւաքաբար. զո՛հ  
չէր անոր նախագահէն. զո՛հ չէր անոնց ընտրութեան ձե-  
ւէն. կ'ուզէր իր ներկայացուցիչներն ունենալ անոնց մէջ:

Կը փափաքէր ընկերութեան կանոնա-  
գիրն տեսնել, որ հանելուկ մ'է տա-  
կաւին. կ'ուզէր վերջապէս հիմնական  
կազմակերպութիւն մը՝ հոգեւոր ու  
սրտով գործին յարելու և անոր օգ-  
նելու համար: Բայց Արժ. Վաղինակ  
վարդապետ իր վրայ առաւ դժուա-  
րութիւնները լուծելու հոգը. «Դուք  
ձայն մ'ընէք. ինծի ձգեցէք ամեն  
բան, և ես ձեր ուզածին պէս կը կար-  
գադրեմ» ըսաւ ու հանդարտեցուց  
ժողովուրդը, որ հնազանդելով իւր  
հովուի ձայնին՝ սպասել սկսեց, և  
կ'սպասէ տակաւին: Շատ քիչ փոփո-  
խութիւններ շատ սակայն, և ա-  
նոնք ալ ժողովուրդը քննադատելու կամ  
անոր օրօր ըսելու նպատակաւ. բայց  
այս «պէպէկ» կարծուած ժողովուր-  
դը լուրապիլ քայքայ ձայնին տակ աչ-  
քերը միայն գոցեց, բայց չի քննադատ,  
այլ հակեց ու սպասեց համբերու-  
թեամբ՝ առանց սակայն սէնթ մ'ա-  
ւելցունելու արդէն հանգանակուած  
գումարին՝ 8 հարիւր տոլարին վրայ:  
Բարեգործական Ընկերութիւնն պիւ-  
նո պիտի բանար, ժողովուրդեան ան-  
գործ մասը պիտի օգտուէր անկէ, և  
ոմանք այնչափ յառաջ զնայցին որ  
կը կարծէին թէ պիւրօն իւղ ու մեղր  
պիտի բղխէր մեր անգործ Հայրենակ-  
ցաց:

Սպասելու պէս գէշ բան չի կայ  
կ'ընեն. բայց ժողովուրդը սպասեց  
երկար. ոչ ոք զիտէր թէ ինչ գործ  
կ'ընէր մեր Բարեգործականը. միայն  
լուած էր թէ ջրմեղն ի մի խմբուած  
էին մեծ գործ մը տեսնելու համար:  
Տրտունջներ կային, բայց շատ խուլ,  
ոչ ոք կը համարձակէր քննադատել  
վանդի քննադատը կը վախնար թէ  
մի գուցէ հակայական գործ մը զին-  
քը ափ ի բերան թողուր յանկարծ:  
«Աղանքը մի ոք էին» . . .

Օրին մէկը ուրախութենէ պիտի  
մարտնչեք երբ վերջապէս Գործադիր  
ժողովը պաշտօնական տեղեկագիրով  
մը, իր մի քանի ամսուան տեսած  
գործոց հաշիւը տալէ զատ, ծանոյց  
թէ գործակալ մը գտնուած էր ու  
պիւրօնի բացումը տեղի պիտի ունե-  
նար շուտ:

Մեր զարմանքը շատ մեծ եղաւ  
սակայն երբ տեսանք որ Գործադիր  
ժողովը «անխոնջ աշխատութեամբ»  
երեմի «Հարաւիք երկու երեք նիս-  
տեր ընելով՝ նուիրած էր մի քանի  
ամիսներ իր պակաս անդամք թիւը  
լրացնելու և խնամակալներ գտնելու  
համար»: Չարմանքնիս աւելի մեծ  
եղաւ երբ ուրիշ աղբիւրներէ լսեցինք  
թէ պակասեալ երկու անդամներու  
ընտրութիւնն տեղի ունեցեր էր այն-  
պիսի մեքենայութիւններով, որք պա-  
տի չէին կրնար բերել ո՛ր և է ընկե-  
րութեան: Իսկ շուտաւ ձեռնարկեց  
երբ տեսանք թէ գործակալն ընտ-  
րուած էր այնպիսի հապճեպով, որ  
մասուրը առիթ իսկ չէր կրցեր ունե-  
նալ երկու խօսք ըսելու ընտրելի  
արժանաւորութեան կամ անյարմա-  
րութեան վրայ:

Մեզ հաղորդուած ուղղակի և  
անուղղակի լուրերուն նայելով, Պատ-  
ուելի Հայկունի, իբր նախագահ, ամե-  
նէ աւելի պատասխանատու անձն էր  
այս ընտրական միջադէպներուն: Ըն-  
թերցողք պիտի զարմանան անշուշտ  
երբոր լսեն թէ բողոքներ չ'եղան և  
այս մասին: Այո՛, շատեր «Եզուսին  
խած»՝ լուազոյն սեպեցին սպասել,  
զի քննադատը կը վախնար թէ մի՛  
գուցէ պատճառ դառնար «Չորհրդա-  
ցրուելուն ու մեծ գործի յանակալու»  
վիճելուն:

Գրասենեակը բացուեցաւ վերջա-  
պէս Մայիսի մէջ. . . Եւ լուսն ծնաւ  
մուկն ջնջին. . . . (Շարունակելի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ ՏԻԳՐԻՍԻ

ՖՐԷՉՆՈՅԻ ՀԱՅՈՑ «ՖԼՈՐ»Ը ՅՈՒՒՆ ԶՈՐՍԻ ԹԱՓՈՐԻՆ ՄԵՋ

Յուլիս 20, Ֆրեյնո.

Ինչպէս ուրիշ տարիներ, այս տարի էս քաղաքին մասնախումբին կողմանէ հրաւէր եկաւ Հայոց մասնակցելու Յուլիս 4ի հանդիսաւոր թափորին. պահ մը խորհեցանք այս տարի զանց առնուլ, բայց ի վերջոյ շատերու կողմանէ յայտնուած փափաքն ու եռանդն տեսնելով՝ յարմար դատուեցաւ «Ֆլոր» մի պատրաստել, կարելի եղածին չափ նպաստակայարմար ու շքեղ ընելով զայն:

Որոշեալ օրն Հայոց «Ֆլոր» սովորակներն պէս փայլուն ու շքեղ կերպով յերեւան եկաւ հանդիսին մէջ: Այդ «Ֆլոր» կը ներկայացունէր վեց մեծ տէրութիւններ՝ հսկայ կարկանդակի պնակի մը շուրջը բարդուած, որուն վրայ գրուած էր «Արեւելեան խնդիր», և որ կը պատրաստուէին պատու պատու ընել: Միւս կողմանէ Ընթըլ Սամը իւր մէկ բազուկին ներքեւ առած Գիւլայի ներկայացուցիչն՝ Գիւլայի տարազով փոքրիկ տղայ մը, միւս ձեռքով վիթխարի սուր մը բռնած, որուն վրայ գրուած էր «Արդարութիւն» բառն, կը կարկանդակէր զայն դէպի կարկանդակ, վեց մեծ տէրութեանց ըսել ուզելով, «Պարոններ, իմ օրինակին հետեցէ՛ք և արդարութեամբ վարուեցէ՛ք»: Վեց մեծ պետութիւնք իւրեանց գեղեցիկ համազգեստներով թէև շատ փայլուն կ'երևէին, բայց Ընթըլ Սամը հսկայ հասակին ու ահաւոր սուրին առջեւ կը նսեմանային:

Աւերորդ է ըսել թէ սա մեծ ընդունելութիւն գաւառ ընդհանուր ժողովուրդին կողմանէ. եռանդազին ծափահարուեցաւ յաճախակի, և ամեն ոք կը կրկնէր թէ Հայոց Ֆլորը այս տարի ալ գերազանցեց միւսները. մասնաւոր երբ կը տեսնային ամերիկեան արծիւն սկզբածեալ՝ Ֆլորին գագաթը գրուած և իր թևերը պարզած՝ օդին մէջ ծածանելու դիրք մի ունէր, ամեն ոք հիացման աղաղակներ կ'արձակէին: Ֆլորին առջեւ կ'երթային մի քանի ձիաւորներ, որոց երկուքը հայկական հին տարազով գրահարուեալ ու զգեստաւորեալ՝ և ուրիշներ Տաճկաստանի այլ և այլ տարազներով:

Հայոց Ֆլորը՝ դարձեալ ամենէն պատուաւոր տեղը գրուած էր. քաղաքին կողմանէ պատրաստուած Փլորութէն անմիջապէս վերջը կ'երթար, որով ընկերութեանց կամ ազգաց Ֆլորներէն առաջ: Տեղական թերթերն զովեստով խօսեցան և յորդոր կարողացին ուրիշներուն ալ որ Հայոց օրինակին հետեւելով՝ խորհրդաւոր ու իմաստալից Ֆլորներ պատրաստեն այսուհետև:

Ֆլորին այս պատրաստութեան համար աշխատող մասնախումբն և ուրիշ անձինք զովեստի ու շնորհակալութեան արժանի են, որոնք ամեն ջանք չը խնայեցին հնար եղածին չափ փառաւոր ու գրաւիչ ընել զայն:

Ամառնային խիստ տաքերուն եւ գիշերուան կարճութեան պատճառաւ, դադար տրուեցաւ մեր վիճարանական և լսարանի ժողովներուն. այս տարի ժողովուրդն աւելի փափաքով կուգար մասնակցել կամ ունկնդրել վիճարանութեանց, ուր ազգային, տնտեսական, ընկերական, քաղաքական ևն. խնդրոց վրայ կը խօսուէր. իսկ լսարանի մէջ մեր ատենախօսներն աւելի ազատ թռչներ առին, մասնաւորապէս այն պատճառաւ՝ որ խօսուելիք նիւթերու ընտրութիւնն իրենց թողուած էր. կրօնք, Ս. Գիրք, մարդակազմութիւն, աստղաբաշխա-

կան գիտելիքներ ևն. օգտակար ու հետաքրքրական ժամանցներ եղան ժողովուրդին համար: Գտնուեցան անձինք ալ, որ այդ թոյլտուութեանն օգտուելով՝ անձնական խնդիրներ ու հաշիւներ կարգադրելու էրան. մասնաւորապէս Ֆրեյնոյի յօդուածագրին դէմ ծանր ակնարկութիւններ ու վիրաւորիչ խօսքեր: Ես մտադիր չեմ մանրամասնութեանց մտնալ, միայն կը փափաքեմ և կը յորդորեմ այդ պարոններն որ ո' և է յօդուածի մը դէմ՝ երբ օրինաւոր ու լուրջ առարկութիւններ ունենան կամ անոր սուտ ու սխալ տեղեկութիւններն հերքելու փաստեր, հրապարակաւ մէջ բերին զանոնք, ու ամօթահար ընեն յօդուածագիրն. այդ է ամենէն ուղիղ և օրինաւոր ճամբան: Անկեղծ հրապարակագիր մը երբէք կարևորութիւն չի տար այդպիսի պատասխանութեանց և միշտ պատրաստ պիտի ըլլայ՝ ամեն կարգի հանրային գործիչներու կամ պաշտօնեաներու ըննադատելի արարքներն ու խօսքերն հրապարակ հանել: Այս սկզբունքով սկսալ գրել ու այնպէս պիտի շարունակեմ:

Արեւելեան նահանգներէն բաւական թուով Հայեր հետգնեալ կուգան ստուարացնել տեղուոյս Հայ գաղթականութիւնն. կը յուսանք և կը հաւատարմութիւն ստեղծել կը գտնուին լուսամիտ, ճշմարիտ ազգասէր ու դարուս պահանջմանց համապատասխանող յառաջիմասէր անձինք, որոնք միանալով տեղս գտնուող նոյն կարգի անձանց հետ, պիտի ջանան լաւ ու օգտակար ուղղութիւն մի տալ ազգութեան՝ Հայրենասիրութեան զգացումն հաստատուն կուտանի մը վրայ դնելու: Ամենէն վերջին եկողներն են Տիար Ա. Հ. Սէքէմեան իւր ընտանիքով ու երեք զաւակներով, և Տիար Թ. Խնկնդրելու հետ բերելով իւր մէկ բարեկամին նշանածը, որն որ վերջերս եկած էր Տաճկաստանէն:

Յ. Մ. ՆՇԻԿԵԱՆ

ԳՆԱՌՆԱՆՔ

(Ատենախօսութիւն Տիկին Զօրտիկեանի, զոր ըրաւ Ֆոլ Ռիվերի Գրադարանի հրապարակային ժողովին մէջ, Յուլիս 24ի կիրակի օրն):

Օտար երկնից տակ ապրող Հայ կին մը եթէ երբէք բարեբաղդ կ'ըլլայ, ես ալ ինքզինքս բարեբաղդ կը սեպեմ այն պատուոյն համար, որ գերադարանի վարչութիւնը կ'ընէ ինծի: Ձեզմէ ալ, ազնիւ Հայրենակիցներ, ներողութիւն կը խնդրեմ զամբ մը վայրկեան ունկնդրելու տկար կնոջ մը: Բարձր գաղափարներ, նորը ասացուածներ, ձեզ հրապարակ ձայն մը չէ որ պիտի լսէք, որովհետև բեմտանց մը չեմ, հրապարակախօս մ'ալ՝ երբէք: Մեզի հետ, մեր շահերուն հետ կապ ունեցող, զիս անհանգիստ և նոյն ատեն հետաքրքրող սա հարցումը կ'ուղեմ ձեր խորհրդին տակ ձգել, թէ Ամերիկայի Հայերս նիւթապէս, Ֆիլիպինապէս և բարոյապէս ի՞նչ զարգացում ունինք:

Ճշմարիտ է թէ այս երկիրը ազատութեան Հայրենիք մ'է, բայց այդ ազատութիւնը մեզ դէպի զարգացում թէ դէպի փճացում առաջնորդող ճամբուն մէջ դրած է:

Ստոյգ է թէ Ամերիկա միլիոնատէրներ ունի, բայց Հայ պանդուխտը դատարկ ստամոքսով իր օրապահիկը ճարելու համար՝ գործարանէ գործարան կը վազէ, և եթէ երբէք գործ մը ունենալ ալ յաջողի՝ այլ ևս ես չեմ խօսիր, որովհետև ամենքդ ալ այդ վիճակին գիտակից էք: Ձեր ա-

մեն օր կրած չարչարանքներուն քով, մաշեցուցած կեանքին քով ի՞նչ կ'արժէ ձեր ստացած շարժական քանի մը սուլարը. այդ վարձք չէ, այլ կեանքի գին. ձեր կեանքերն են որ կը փճանան: Ամերիկայի հարուստ երկիր մը ըլլալը մեզ համար ի՞նչ նշանակութիւն կրնայ ունենալ՝ երբ միայն մեր ապրուստին համար այնչափ ծանր, կեղտոտ և տաժանելի աշխատութիւն յանձն կ'առնենք: Ամերիկայի հարստութիւնը մեզ աւելի վիշտ կը պատճառէ, երբ կը տեսնենք Հայ կինը, որ իր նորածինին կաթ տալու համար հարկ եղած սնունդը չը կըրնար գտնել: Հայ գաղթականութեան մէջ թշուառութեան աստիճանը օրէ օր կը բարձրանայ, և չը գիտենք ալ թէ մինչև ե՞րբ գործերու այս թոյլ վիճակը պիտի տևէ. փորձն սակայն ցոյց կուտայ թէ տարիէ տարի գործարաններու շարժումները կը կարծին, գործերը կը պակսին: Թերևս առարկան թէ նիւթապէս զարգացողներ կան. Հայ գաղթականութեան հարիւրէն քանի՞նք թիչ շատ նիւթական համեստ կարողութիւն մը ունեցողներէ կազմուած է. մեր հարուստները մատի վրայ համբլուսանգամ անբաւական են. ասոնք բացառութիւններ են. մեր տեսակէտը ընդհանուր գաղթականութիւնն է Ամերիկայի: Շատ պարզ իրողութիւն մ'է թէ, գործաւորական կեանքով նիւթական համեստ կարողութիւն մը ունենալ անկարելի է:

Ֆիլիպինապէս ունեցած քայքայու մնիս ալ շատ պարզ է: Մեր կայտառ, կտրիճ երիտասարդները գործարաններու խղճուկ օդին մէջ կը խամրին. շատեր 35 ասարեկան չ'ըղած՝ զառամած ծերի մը կերպարանքը առած են. ծաղիկ հասակին կը մաշեցնեն ո'չ միայն գործարանի անտանելի աշխատութիւններուն մէջ, այլ նաեւ օրհնեալ ազատութեան շարաշար գործածութեանը մէջ. ասոնք նոյն մարդիկն են որ մեր երկրին մէջ առողջ, կայտառ և իրենց գործերով կ'զբաղէին, բայց այս երկրի բարձր բաւական են փճացնել երկաթէ կազմուածքներն անգամ. ասոր վրայ երբէք չեմ ծանրանար, որովհետև ամենքդ ալ կ'զգաք Ֆիլիպինայի այն քայքայումը, որ համաճարակ է Հայ գաղթականութեան մէջ: Աչք ունեցող ամեն մարդ կը տեսնէ զայն: (Շարունակելի)

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՄՐՃՄԱՆ ՓԱԿՈՒՄԸ

Բանաստեղծական մրցումն, ինչպէս որ ծանուցած էինք վերջերս, փակուած ըլլալով, մրցակից անձանց բանաստեղծութիւններն նկատողութեան առնուեցան ու հետեւեալ անձինք ստացան խոստացեալ մրցանակներն: Սուր Երկաթի տրուեցաւ առաջին մրցանակն, Բանաստեղծը ստացաւ երկրորդը, իսկ երրորդը տրուեցաւ Բերթոյ ծածկանունը գործածող անձին: Ասոց ճիշդ անուններն, եթէ հաճութիւն տան, կը խոստանանք հրատարակել ուրիշ առթիւ:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

- Կ. Խ. Ուսթըր—25 սէնթ յանձնած ենք տեղուոյ Հայոց եօթնեակին:
Հ. Տ. Ուէսթըն—Ձեր ուզած հին թիւերը չունինք:
Յ. Ս. Ֆիլիպինա—Սպասեցէք քիչ մը, այդչափ անհամբեր մի ըլլաք. կը կարգաք այդ մասին, երբ կարգը գայ:
Բ. Թ. Նայաք—403 Ուէսթ 16րդ Փողոց, Նիւ Եորք:

ԴԱՇՆԱԿԸ(\*)

Առ Օր. Ա. Ս. Պլաքուէլ.

Ծառերու մէջ մեզմատաւան, Որք բարձրանան բլրակն իմեր, Մեզմ ցաւազին շեշտովն աշնան Մի խօլ նուագ հծծեն հովեր:

Լուռ էր սակայն դաշնակը, լուռ, Երգող հովից հետ չ'երգեր նա, Սենեկին խորն իւր սեւթոյր կափարչին տակ կը ընանայ:

Արդեօք պակսի՞ նմա՞ մատանց ճարտար հպուռն ու ելեւէջ, Որ մի սարսուռ շրջի թափանց իւր բովանդակ մկանանց մէջ:

Ա՛հ, Նեղոսի նա չէ նման, Ժլատ գործին այն ձայնատու. Որ արևուն կ'ուղղէր միայն իւր մեղեդին ամեն առտու:

Նա համակիր մ'է զգայուն, Հոգւոց բարբառն որ կը խօսի, Երկա՛ր երկնած է նա անունն Արձազանքը ցաւի, յոյսի:

Յաճախ յուզուած են իւր լարեր Այրած սրտից շեշտերու տակ. կամ ծիծաղած երբ անդ պարէր Ձեռք մը ցաւոց դեռ անգիտակ:

Լուռ է այսօր, դոց իւր բերան, Երգելու տեղ՝ թուղթի դէզեր Բարձած կրէ կափարչին վրան, Լուռ է այսօր երգել չ'ուզեր:

Ո՛չ, իւր բեռէն դժգոհ չէ նա, Տխուր է լոկ, դաշնակ զթոս. Ձի այն թուղթից մէջ կը տեսնայ Մեռնող ազգի մ' վերքն արիւնտ:

Լուռ է դաշնակ, զի հեռաւոր Եւ անծանօթ երկինքի տակ, Լուռ են ամեն ինչ ամեն օր. Լուռ է դաշնակ, լուռ է ջուրակ:

Ա՛խ, այն երկրին մէջ աւերակ Անթիւ կեանքեր լուեն իսպառ. Հոն կը սփռեն սուր և կրակ Մահու տաքնապ կատաղարար:

Թէ մարդն անարժ է հանապազ Հանդէպ եղբօրն տառապանքին. Այս չէ պատճառ որ դու զգաս Թշուառներու վիշտն ահագին:

Թերևս կուզես այն անբաղդից Որ մ'ալ ուղղել շիրմացն օտար. Բայց ոչ, գիտեմ նա իւր սրտից Ինչի ցանկայ համբերատար:

Նա կը ցանկայ այն մեծ օրուան, Երբ ստրուկ Հայն ազատ լինի. Որ իւր զուարթ թիւերն գրուան Մի մեծ ողջոյն Հայաստանի: Պօսթոն. Խ. Ս. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Շնորհակալութեամբ ստացանք Տ. Ա. Սպալ-Գիւլեանի Երկրայի Բաղադական Դրութիւնը Պէրլինի Դաշնագրութիւնից յետոյ՝ անուն գրքոյկը, որ սպազրուած է ի Ռուսուք և կը պարունակէ 96 երեսներ: Հեղինակը քաղաքագէտի մը յատուկ հմտութեամբ յաջողած է իւր այս գործով պատկերացնել Ռուսիոյ քաղաքական դրութիւնն, զոր կ'արժէ գիտնալ ու սորվիլ: Գինն է մէկ Ֆրանք:

(\*) Գրեթէ տարի մը առաջ բաւկամի մը հետ այցելութեան գացինք նշանաւոր Հայաստան Ամերիկուհոյն, որ Երկրային նոր վերադարձած էր: Խոշոր դաշնակի մը վրայ կուտակուած էին ամեն տեսակ գրութիւնք, լրագրի կտորներ, գրքեր, բոլորն ալ Հայաստանի քարտեզուն կամ Հայկական ինդիոյ քաղաքներեալ, զորս պիտի գաստակարգէր իւր գրատան մէջ պահելու համար: Գիտի չարչարուող ազգ մը տաճած օտարի մը այս սէրը, որ այնքան խնամով կը հաւաքէր անոր ներկատամբ եղած գրութիւնները, թերևորեց ինձ գրել սոյն ոտանաւորը:

Մ Ա Ն Բ Ա Լ ՈՒ Ր Ք

Տ. Արշակ Զօպանեան յառաջիկայ նոյնմբեր մէկէն սկսեալ Փարիզի մէջ պիտի սկսի հրատարակել «Անահիտ» անուն ամսեայ հանդէս մը, ազգային, գրական և գեղարուեստական: Անահիտի բաժանորդագրին պիտի ըլլայ 12 Փրանք՝ տարեկան:

Բաժանորդագրուել փափաքողներէ կը խնդրուի ըմբաբարձութեան կողմէ՝ կարելի եղածին չափ շուտ՝ դիմել հետեւեալ հասցէին.

Թիւ 6, Փլաս տը լ'Օտէոն. Փարիզ.

Իրաւունք կը լսէ թէ Ս. Լուսաւորչի նշխարաց գիտին օրն Վեհ. Կաթողիկոսը եպիսկոպոս ձեռնադրեր է Մարգարէ Տէրունեան, Յովսէփ Մարաճեան և Սահակ Այվասեան վարդապետները:

Աստուար Սիմոնեան անուն յարբերագիր անձը շարժուաւ մէջ 1140 տարի դրամ բաճկոնի գրպանէն ձեռքած ու կորսնցուցած է զինեան մը մէջ: Այս գումար, որ յիշեալի և իր եղբոր դառն քրտանց արդիւնքն էր, Ասատուր վերջերս դրամատունէն հանած՝ գրպանին մէջ կը պահէր իր ասպնոզվազոյն վայր, զի կը վախնար թէ մի գուցէ պատերազմի առթիւ դրամատունն սնանկանար ու յիշեալ գումարն կորուսէր անոր հետ:

Թող այս կորուստ գործնական դաս մ'ըլլայ անոնց որք մեծաքանակ դրամ կը պահեն քովերին՝ իրր ասպնոզ վայր: Մեր ազգայիններն քաջ գիտնալու են թէ դրամատուններն (սէյլին պանքս) ամեն հովէ շարժող խախուտ հաստատութիւններ չեն սընանկանալու ենթակայ: Կառավարութիւնն աշարղը կը հսկէ այդ հաստատութեանց վրայ:

Պ. Զաքարիա Սէֆէրեան, Սեբաստիացի, որ Ֆրիատէյֆիոյ ատամնաբուժական վարժարանին մէջ կ'ուսանէր՝ իր արուեստն կատարելագործելու համար, շարժուաւ մէջ յաջող քննութեամբ իր վկայականն ստացաւ: Տքթ. Սէֆէրեան շարժուաւ մէջ Հայրենիք կը մեկնի:

Յուլիս 4ին յանկարծամահ եղող Մաթիկ աղա յաջատուրեանի սենեակը բացուեցաւ Ազգ. Հոգաբարձութեան հրամանաւ, ու անոր գոյքերն աճուրդիւ վաճառուեցան՝ Տ. Սադ վարդապետի ձեռամբ: Գոյացած դրամը Պօլիս Պատրիարքարան պիտի զրկուի:

Գրիգոր Մանասեանի կրտսեր որդին, երեք տարեկան, շարժուաւ մէջ մեռաւ Փօսթ Կրամուէյթ հիւանդանոցին մէջ, հարսանիք կոչուած հիւանդութիւնով:

27րդ փողոցի ճաշարանին մէջ կռիւ մը պատահած է անցեալ Շաբաթ երեկոյ, ճաշարանապետ Նշանի և իր յաճախորդաց մէջ: Նշան անխելայ գանակործուած ըլլալուն համար՝ կառավարութեան պիտի դիմէ եղեր: Կռիւն յառաջ եկած է ծանր մի ամբաստանութենէ, որ ճաշարանապետն ըրած է եղբր իր յաճախորդաց դէմ:

Բօնքօրտէն կը գրեն մեզ թէ տեղւոյն որբայնամ ընկերութիւնն շնորհակալութեան եւ օրհնութեան նամակ մը ստացեր է Ս. Պատրիարք հօրմէն՝ յանուն որբոց զրկուած վերջի 30 տղար նուէրին համար: Այս խումբ կազմուած է անցեալ Յունվարի 30ին, և ցարք յաջողած է 105 տղար զրկել Հայաստանի որբերուն ինպաստ:

Թրոյթի որբայնամ ընկերութիւնը 25 տղար զրկած է յարբերգի Միսիօնարաց՝ իր նպատակին գործածուելու համար:

Պրայթընի որբայնամ ընկերութեան զործագիր անդամները, Տիարք Գէորգ Իւրայէլեան և Ահարօն Օհանեան կը ծանուցանեն թէ շար-


ժուս մէջ Ս. Պատրիարք հօր շարժուած են § 24.75 նոյն ընկերութեան կողմէ՝ ի նպաստ որբոց:

Մօլտընի վերակազմեալ Հընչակեան մասնաճիւղը անցեալ Կիրակի հրապարակային ժողով մը ունեցաւ, ուր խօսեցան Պատուելիք Զիթճեան, Յովհաննէսեան, Մարգուկէսեան և Յովսէփեան, նաև Տ. Հայկազունի:

Փրօվիտէնէն կը լսենք թէ անցեալ շաբթու սափրիչ Յարութիւնեանի խանութն գողեր մտած, քաջանի մը տուար դրամ, երեք ածելի և մէկ լուսանկարչական գործի (Բամարայ) տարած են:

Մանչէսթըրի մէջ անցեալ շաբթու գողութեան դէպք մ'ալ պատահած է: Գողերն Մեզրէյի Պետրոս Մ. Պողոսեան անձի սենեակը մտնելով՝ յիշեալի սնտուկը կը կորսեն այս անգամ, ու 29 տղար դրամ կը տանին:


ՎԱՐՓԱՊԵՏԵԱՆ ԵՒ ՈՒՉՈՒՆԵԱՆ Վաճառականք և Նորագիշք Թիւ 159 Իսթ 27րդ Փողոց, Նիւ Եորք.



Գիրամաշէլի Գնեք.

Պատու ունին ծանուցանել թէ այս խանութ հաստատած են վաճառելու համար ամեն տեսակ պատրաստ հագուստներ՝ խիստ աժան գրներով: Կր կարեն ապրրուած նոր հագուստներ կը նորոգեն հիւներ, կը ներկեն, կ'արթուեն (իւթիւ ընել) և կ'ընեն ինչ որ կարևոր է գործածուած զգեստեղէններուն նորի երեւոյթ տալու:

Կը վաճառեն նաև ամեն տեսակ ձերմակեղէն ևն. ևն. 4



ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳԻՏԱՐԱՆ

Յերորդ Տպագրութիւն Մաքսուէլ Սըմըրվել Հրատարակիչ

Կը բողկանայ 25 մեծադիր հատորներէ, որք կը վաճառուին բաժանորդագրութեամբ միայն:

Սոցա գրին է, Կտաւեայ կազմ 62 տղ. 50 սէնթ կէս կաշիկազմ 87 " 50 " Փառակազմ 100 "

Առաջին տեսակէն կը զրկուի անոնց որք յանձն կառնեն վճարել ամիսը 2 տղար 50 սէնթ: Երկրորդին ամսավճարն է 3 ու կէս տղար, իսկ վերջինին՝ 4 տղար:

Այս Համագիրտարանն Ամերիկեան միակ արտօնեալ տպագրութիւնն է. մնացեալք անկատար են ամեն կերպով: Մանրամասնութեանց համար դիմել յմբաքրութեանս:


ՏԻԳՐԱՆԷՔԻՓԵԼԵԱՆ Միւսակաշայկ Սափրիչն ի Նիւ Եորք, 607 Յրդ Ալբեր, 39ի և 40ի մէջ

Մազին ձեռ մարդու մը գլխաւոր գարդերէն մին է. օտար ազգի սափրիչի երթալով՝ ուզածդ հասկըցունելու դժուարութիւն մի կրեր, մենք պատրաստ ենք ձեր սիրած ձեւով կորել ձեր մազը և մօրուքը, ինչպէս նաև կակուղի մը կ'ածիլենք երեսները:

Մեր գներ հասարակ են և գործը առաջնակարգ: Եաւե ածելիներու ամենալաւը § 1.25 ի կարող ենք ծախել: Փորձեցէք և տեսէք:

Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, Թիւ 628 Յրդ Ալբեր, Նիւ Եորք:

Կը ծանուցանէ թէ, իր ներկայացուցիչ համբաւաւոր մի վաճառատան,



Կարող է ծախել ամէն տեսակ հեծելանիւներ խիստ աժան գներով: Գնել փափաքողք եթէ իրեն դիմեն գոհ կը մնան միշտ:

Ա. ԹՕՓՈՒՉԵԱՆ, ԿՕՇԿԱՎԱՍՏԱՌ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ, Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք.



Այս խանութին մէջ կը վաճառուին ամէն տեսակ կոշիկներ խիստ աժան գներով: Մեր հայրենակիցներէ փորձ մը միայն կը խնդրենք: Նոր ապարուած կոշիկներ կը կարենք ձեւաւորել վայելելի կերպով: Կը նորոգենք հին կոշիկներ շափաւոր գներով: Ուրիշ մը երթալէ յառաջ ինձ եկէք անգամ մը. և վստահ եղիք որ շատ զոհ պիտի մնաք: 239 Իսթ 26րդ փողոց Արանց կոշիկներ § 1.25է մինչև § 5.00 կանանց " § 1.25 " § 2.50 Տղայոց և աղջկանց կոշիկներ § 0.50 " § 1.50

ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ

Նկատելով որ ամեն կողմերէ շատ մը բանաստեղծութիւններ կը զրկուին մեզ, և նկատելով որ ՏԻԳՐԻՍԻ մէջ տեղւոյ անձկութեան պատճառաւ չենք կարող զանոնք հըրատարակել, որոշած ենք՝ մեր ընդունած այս ոտանաւորներն՝ մեծաւ մասամբ՝ առանձին հատորի մը մէջ ամփոփել, պայմանաւ որ ամէն փափաքող անձ իր ոտանաւորին համար հարկ եղած շարեւ, և լէքթըրօթայի շինելու և տպագրելու ծախքերն վճարել յանձն առնէ կանխաւ:

Հեղինակներն իրենց իւրաքանչիւր ոտանաւորին համար մէկ կամ երկու օրինակ պիտի ստանան հրատարակուած հատորէն՝ երբ լոյս տեսնէ:

Այս հատորը պիտի անուանուի «Ժողովրդական քնար»:

Մանրամասնութեանց համար գըրել լրագրոյն յմբաքրութեան:

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱԶԻ ԴԵՂ



Կը զօրացնէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դադրեցնէ: Կը բուժէ նաև մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփերը:

Միանգամփորձել բաւական է սաղեղին արժէքը գիտնալու համար, որ արեւելեան խոտերէ պատրաստուած է յոյժ հաճելի մի հոտով: Կը ծախուի րոտը գեղազործներուն քով: Գին 50 Սէնթ միայն.

Կարելի է ստանալ նաև ՏԻԳՐԻՍԻ րնկերութենէն:

Կը վաճառուի նաև Տ. Յ. Բարակեանի քով, Թիւ 45 Էքսքէնձ ըսթրիթ, Ուսթըր, Մասս:



Յ Ա Կ Ո Ւ Ն . Ն Ի Ր Պ Ե Կ Ե Ա : (Ներկայացուցիչ) ՈՒՒԼԻՐՄ Պ. ԳԵՕՂԻՐ ԵՒ ԵՂԲԱՐՑ, Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ք Գինի, Օղի, ողեղից ըմպելեաց Թիւ 202, 204 Իսթ 29րդ Փողոց Նիւ Եորք, Ն. Ե.

Պատու ունին ծանուցանել արգ. հասարակութեան թէ իւր վաճառած ըմպելիքներն ոչ՝ միայն փորձեալ և անխարդախ են, այլ և դիւրամտաչելի են ամէն գասակարգի անձանց:

Այս վաճառատան մէջ կը ծախուին Եւրոպական, տեղական, Գալիֆորնիայի և տաճկական ամէն տեսակ ուիսքի, օղի, գինի, շամբանի, մասթիքայ, դարձուր, պրանտի, ախիլի և այլն, իրենց ամեն տեսակներով:

Փափաքողաց գներու ցուցակը զրկուի առանց ո'ւ է ծախքի:

Յանձնարարութիւնը կը կատարուին ամենայն ճշգրտութեամբ և փութով: Բաղաքին մէջ ապրանքներն ձրի կը զրկուին, իսկ քաղաքէ դուրս զրկուածնեուն ծախքը գնողներուն վրայ է:

Ըմպելիքներ կը վաճառուին թէ՛ մեծ և թէ՛ փոքր քանակութեամբ, իրենց յատուկ գներով: (Հօսէ լլ անտրիթէլ)

Մեր յաճախորդքը երբ չի հաւնին իրենց գնած ըմպելիքներուն, յանձն կառնենք զայն փոխել, եթէ պակասած ու փաստուած չըլլան:

Ըմպելիքներ կը վաճառուին չիւշով, կայրով, տակառով և յատուկ սնտուկներով որք կը պարունակեն 12 կամ 24 շիշեր:

Գիմել յիւեալ հասցէին կամ Յ. Ն. ՆԻՐՊԵԿԵԱՆ, 535 ՈՒԵՍԹ 57րդ Փողոց, Ն. Ե.

Յ. ԹԱԳԱԳՃԵԱՆ ԵՒ Պ. ԵԹԱՐԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ Թիւ 242 Իսթ, 41րդ Փողոց

Պատու ունին ծանուցանել թէ, այս նոր ճաշարանն բացած են սա վստահութեամբ միայն թէ մաքրութիւն և ընտիր խոհարարութիւն միշտ կը գնահատուի հասարակութեան կողմէ:

Միանգամ փորձել բաւական է մշտնջենական յաճախորդ ըլլալու: